

## ՅԱԿՈՒ ՊԱՊԻԿԵԱՆ



1909ի գարնան եր, երբ Մոնկոլեան սել բաթը կարմիր եր ներկեր Կիլիկիոյ ամբողջ դաշտը եւ վերածեր եր զայն համասարած գերեզմանի մը . Սիհուն եւ ձիհուն հայ արիւնի հեղեղներ էին ընդուներ: Ու Երիսասարգ-Քուրեթը, յայնի թէ ծածուկ, դիւանենց ժպիտով, ձեռներնին շփեր էին՝ գերագոյն պարտք մը կասարած ըլլալու բորենավայել լրբութեամբ, թփնելով այսպէս՝ Քաղաղափառութեան ալ, իրենց պաշտած Ալլահի՛ն ալ երեսին: Հին թէ նոր թուրք մտայնութեան արդիւնն է եղեր այդ, որ չէ ուզած երբեք ըմբռնել թէ այս երկրին երեկուան եւ վաղուան տերերն ալ կրնային իրաւունք ունենալ ապրելու:

Կը հասնին սակայն սրափուռի օրերը, պէտք էր մոխիր ցանել Մեծ Նղեռնին վրայ, դիպառողը կասարել խաչուած Արդարութեան: Օսմ. Երեսփ. Ժողովի թուրք մեծամասնութիւնը, սրտառուչ համեմատութեամբ մը պաշտօն կուտար իր իսկ անդամակիցներէն «սամանցիացած» Հայու մը՝ անոր բերելիք նպաստաւոր տեղեկագրութեան մը կանխահոգ մտածումով: Այսպէս կ'ենթադրէին գէթ Հայերն ալ, որ աղաղակ բարձեր էին այդ ընտրութիւնը բեկանելու համար:

Եւ անա՛ Պապիկեան Պոլսէն կը մեկնէր անտուն կ'ըստիմը կուրծքին մէջ: Կը հասնի ադէսին վայրը, կը տեսնէ գործուած Ոնիքը. եւ, անոր դէմ աղաղակող ընդվզումն է որ կը փրփրի իր մէջ: Անոր նպատկայն է